



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ (ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԻ)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Կոմունիստական Ինտերնացիոնալի սեկցիա

Ընդունված է միաձայն Համկոմկուսի (բ)
XVII համագումարում 1934 թ. վերջարի 10-ինԿՈՒՍՆՐԱՏ
ԲԱԳՈՒ
1934

A 40248

Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկներին) Կուսակցությունը, վերը հանդիսանում է Կոմունիստական ինտերնացիոնալի սեկցիան, թՄՀՄ պրոլետարիատի առաջավոր, կազմակերպչ-ռմած շոկատն է, նրա դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևը:

Կուսակցությունը պրոլետարիատի, աշխատավոր գյուղացիության և բոլոր աշխատավոր մասսաների ղեկավարությունն է իրականացնում՝ պրոլետարիատի դիկտատուրայի, սոցիալիզմի լադթանակի համար մղվող պայքարում:

Կուսակցությունը ղեկավարում է պրոլետարական դիկտատուրայի բոլոր որգանները և ապահովում է սոցիալիստական հասարակության հաջող կառուցումը:

Կուսակցությունը միասնական մարտական կազմակերպություն է, վերն շաղկապված է պրոլետարական դիկտակից յերկաթակուռ կարգապահությամբ: Կուսակցությունն ուժեղ է իր համախմբվածությամբ, կամքի միասնությամբ և գործողությունների միասնությամբ, վերոնք անհամասեղելի յեն ծրագրից նահանջելու հետ, կուսակցական կարգապահության խախտման յիվ կուսակցության ներսում ֆրակցիոն խմբավորումների հետ:

Կուսակցությունն իր անդամներից ալտիվ և անձնագոր աշխատանք է պահանջում կուսակցության ծրագրին ու կանոնադրությունը կենսադործելու, կուսակցության և նրա որգանների բոլոր վորողումները կատարելու, կուսակցության շարքերում միասնականությունն ապահովելու, յեղբայրական, ինտերնացիոնալ հարաբերությունները, ինչպես թՄՀՄ ազգությունների աշխատավորներին, յայնպես և աշխարհիս բոլոր յերկրների պրոլետարների միջև ամրապնդելու համար:

I. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՅԵՎ. ՆՐԱՆՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Կուսակցության անդամ է համարվում յուրաքանչյուրը, ով ընդունում է կուսակցության ծրագիրը, աշխատում է նրա վորեն կազմակերպության մեջ, յենթարկվում է կուսակցության վորողումներին և մոծում անդամավճարները:

2. Կուսակցության անդամը պարտավոր է.

ա) պահպանել ամենախիստ կուսակցական կարգապահություն, ալտիվ մասնակցել կուսակցության և յերկրի քաղաքական կյանքին, գործնականում կիրառել կուսակցության քաղաքականությունն ու կուսակցական որգանների վորողումները:

բ) անդուլ աշխատել իր գաղափարական գինվածությունը բարձրացնելու վրա, մարքսիզմի-լենինիզմի հիմունքները, կուսակցության կարևորագույն քաղաքական և կազմակերպչական վորոշումները յուրացնելու վրա և բացատրել նրանց անկուսակցական մասսաներին:

գ) վորպես կառավարող կուսակցություն անդամ, խորհրդային պետություն մեջ, լինել որինակ աշխատանքային և պետական կարգապահություն պահպանման բնագավառում, տիրապետել իր գործի տեխնիկային, անընդհատ բարձրացնելով իր արտադրական գործարար վորակավորումը:

3. Կուսակցության մեջ անդամների ընդունելությունը կատարվում է բացառապես անհատական կարգով: Նոր անդամներ ընդունվում են թեկնածուների թվից, վորոնք անցել են սահմանված թեկնածուական ստաժը, քաղաքական գրագիտության դպրոցը և յուրացրել են կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը: Կուսակցության անդամ են ընդունվում բանվորները, կոլտնտեսականները, կարմիր բանակայինները, ուսանողները, և ծառայողները, վորոնք իրենց ցույց են տվել համակրողների խմբակներում, խորհուրդներում, պրոֆմիություններում, կոմյունիստության մեջ, կոոպերացիայում, պատգամավորական փողոցներում կատարած աշխատանքի ընթացքում, այն կազմակերպությունների գնահատականը ստանալուց հետո, վորտեղ ընդունվողն աշխատել կամ աշխատում է:

Թեկնածուներից կուսակցության անդամ ընդունելու կարգը հետևյալն է.

ա) սահմանվում է չորս կատեգորիա՝ 1) արդունաբերական բանվորներ, առնվազն հինգ տարվա արտադրական ստաժով, 2) արդյունաբերական բանվորներ, հինգ տարուց պակաս արտադրական ստաժով, գյուղատնտեսական բանվորներ, բանվորների և կոլտնտեսականների շարքերից դուրս յեկած կարմիր բանակայիններ և ցեխում կամ աշխատամասում անմիջապես աշխատող ինժեներատեխնիկական աշխատողներ. 3) կոլտնտեսականներ, տնայնագործական-ղրադմունքային արտեղների անդամներ յեվ տարրական դպրոցի ուսուցիչներ. 4) մնացած ծառայողները:

բ) կուսակցության մեջ մտնելու համար առաջին կատեգորիային պատկանող անձինք ներկայացնում են 3 յերաշխավորություն կուսակցական հնգամյա ստաժ ունեցող կուսակցության անդամներից, յիրկրորդ կատեգորիային պատկանող անձինք՝ հինգ յերաշխավորություն կուսակցական հնգամյա ստաժ ունեցող կուսակցության անդամներից, յերրորդ կատեգորիային պատկանող անձինք՝ հինգ յերաշխավորություն կուսակցական հնգամյա ստաժ ունեցող կուսակցության անդամներից և ՄՏԿ ի քաղբաժնի կամ շրջկոմի ներկայացուցչի յերաշխավորությունը, չորրորդ կատե-

գործիային պատկանող անձինք՝ հինգ յերաշխավորություն, տասնամյա կուսատաժ ունեցող կուսակցության անդամներէց:

Մանրորւթյուն.— Բոլոր կատեգորիաներով կոմյերիտմիությունից կուսակցության անդամ ընդունելիս՝ Համլենկոմյերիտմիության ռայոնական կոմիտեյի յերաշխավորությունը հավասարեցվում և կուսակցության յերկու անդամի յերաշխավորությանը:

զ) մյուս կուսակցությունների նախկին անդամներն ընդունվում են բացառիկ դեպքերում կուսակցության հինգ անդամների յերաշխավորությամբ, վորոնցից յերեքը պետք է ունենան տասը տարվա կուսակցական ստաժ, իսկ յերկուսը մինչհեղափոխական կուսատաժ և անպայման ստորին արտադրական կազմակերպության միջոցով ու անպայմանորեն Համկոմկուսի (ք) Կենտկոմի հաստատումով, անկախ ընդունվողի սոցիալական դրությունից:

Մանրորւթյուն.— Կենտկոմը կարող է այլ կուսակցություններից դուրս յեկաժներին կուսակցության անդամության մեջ վերջնականապես հաստատելու իրավունքը տալ՝ առանձին յերկրային և մարդային կուսկոմիտեյին և ազգային կոմկուսների կենտկոմներին:

դ) յերաշխավորությունների ստուգումը նախորդում է ընդունելությանը և տեղական կուսկոմների պարտավորության մեջ է մտնում:

յ) կուսակցության մեջ ընդունելու հարցը նախապես քննարկվում և կուսակցական սկզբնական կազմակերպության կողմից, վճռվում է կազմակերպության ընդհանուր ժողովում և ուժի մեջ է մտնում՝ առաջին և յերկրորդ կատեգորիայի համար՝ ռայկոմի կամ քաղկոմի հաստատելուց հետո, իսկ յերրորդ և չորրորդ կատեգորիայի համար՝ մարզկոմի, յերկրային կոմիտեյի, կամ ազգային կոմկուսների կենտկոմների հաստատելուց հետո:

զ) յերիտասարդները մինչև 20 տարեկան հասակը ներառյալ կուսակցության մեջ են մտնում միայն Համլենկոմյերիտմիության միջոցով:

4. Յերաշխավորություն տվողները պատասխանատվություն են կրւում իրենց յերաշխավորյալների համար և անհիմն յերաշխավորություն տված լինելու դեպքում, յենթարկվում են կուսակցական տուժի՝ մինչև իսկ կուսակցությունից վտարման:

5. Թեկնածուներից կուսակցության մեջ ընդունվածների կուսակցական ստաժը հաշվում է համապատասխան կուսակցական սկզբնական կազմակերպության ընդհանուր ժողովի կողմից տրվյալ ընկերոջը կուսակցության անդամ ընդունելու մոտին կայացրած վորոշման որից:

6. Մի կազմակերպության յուրաքանչյուր անդամ մի ուրիշ

կազմակերպության աշխատանքի ռայոնը փոխադրվելու դեպքում հաշվում ե վերջինիս անդամ:

Ծանոթություն.— Կուսակցության անդամների փոխադրվելը մի կազմակերպությունից մյուսը, տեղի յի ունենում Համկոմկուսի (ք) Կենտկոմի սահմանած կանոնների համաձայն:

7. Կուսակցության այն անդամներն ու թեկնածուները, վորոնք յերեք ամսվա ընթացքում առանց հարգելի պատճառների անդամավճարները չեն վճարում, համարվում են կուսակցությունից դուրս մնացած, վորի մասին հայտնվում ե ի գիտություն սկզբնական կազմակերպության անդամների ընդհանուր ժողովին:

8. Վորեւ մեկին կուսակցությունից հեռացնելու հարցը վճռվում ե այն կազմակերպության ընդհանուր ժողովի կողմից, վորի անդամն ե հանդիսանում տվյալ անձնավորությունը և հաստատվում ե՝ առաջին և յերկրորդ կատեգորիայի պատկանողների համար ժաղալին կամ յերկրային կոմիտեյի կողմից, իսկ յերրորդ և չորրորդ կատեգորիային պատկանողների համար՝ ռայոնական կամ քաղաքային կոմիտեյի կողմից ընդ վորում ընդհանուր ժողովի կամ կուսկոմիտեի կողմից հեռացված որից տվյալ անձնավորությունը հեռացվում ե կուսակցական աշխատանքից: Կուսակցության անդամների հեռացման մասից հրապարակվում ե կուսակցական մամուլում՝ մատնանշելով հեռացման պատճառները:

9. Համկոմկուսի (ք) Կենտկոմի պարբերական վորոշումներով գտումներ են կատարվում, վորպէսզի կուսակցությունը սխառմատիկորեն մաքրվի՝

դասակարգայնորեն—խորթ և թշնամի տարրերից.

յերկրեւանիներից, վորոնք խաբում են կուսակցությանը և թագցնում Նրանից իրենց իսկակտն հայացքներն ու վիժեցնում կուսակցության քաղաքականությունը.

կուսակցության և պետության յերկաթե կարգապահությունը բացահայտորեն ու քողարկված խախտողներից.

բուրժուական տարրերի հետ համակցող վերասերվածներից.

կարյերիստներից, մորթեպաշտներից ու բյուրոկրատացած տարրերից.

բարոյապես քայքայվածներից, վորոնք իրենց անվախելուչ վարքով գցում են կուսակցության արժանապատվությունը և արատավորում են կուսակցության դրոշը.

պասսիւներից, վորոնք կուսակցության անդամների պարտականությունները չեն կատարում և չեն յուրացրել կուսակցության ծրագիրը, կանոնադրությունն ու կարևորագույն վորոշումները:

II. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ

ԹԵԿՆԱԾՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

10. Բոլոր անձինք, ովքեր ցանկանում են կուսակցության մեջ

մանել, պետք է անցնեն թեկնածուական ստաժ, վորի նպատակն է հիմնականորեն ծանոթացնել կուսակցության ծրագրի, կանոն-նադրություն, առկա իրավիճակի հետ և ստուգել թեկնածուի անձնական հատկությունները:

11. Թեկնածու ընդունելու կարգը (կատեգորիաների բաժանում, յերաշխափորությունների ընույթն ու նրանց ստուգումը, ընդունելու մասին կազմակերպության վորոշումը, կուսկոմի կողմից հաստատելը) միանգամայն նույնն է, ինչ վոր կուսակցության անդամ ընդունելիս:

12. Թեկնածուական ստաժ է սահմանվում առաջին կատեգորիայի համար մեկ տարի, յերկրորդ, յերրորդ և չորրորդ կատեգորիայի համար յերկու տարի:

Մանրորւթյուն—Ուրիշ կուսակցություններից դուրս յեկածները, անկախ նրանց սոցիալական դրությունից, յեռամյա թեկնածուական ստաժ են անցնում:

13. Կուսակցության անդամության թեկնածուները մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով այն կազմակերպության ժողովներին, վորում նրանք գտնվում են:

14. Թեկնածուները մոծում են սովորական անդամավճար տեղական կուսկոմի տեյի դրամարկդին:

III. ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

15. Համկոմկուսի (ք) շուրջը համախմբելու համար կուսակցությանն ամենամոտ անկուսակցական այն ակտիվիստներին, վորոնք գործով արտադրության մեջ ցույց են տվել իրենց նվիրվածությունը կուսակցությանը, բայց դեռ ևս չեն նախապաշարատուվել կուսակցության մեջ մտնելու համար, սկզբնական կուսակցական կազմակերպություններին կից ստեղծվում են Համկոմկուսի (ք) համակրողների խմբակներ, վորոնք անպայման յենթարկվում են կուսակցական օրգանների բոլոր վորոշումներին:

16. Համակրողների խմբակներում ընդունելը կատարվում է դործարանային, հիմնարկային և այլ կուսակցական կոմիտեների, ՄՏԿ-ների, սովխոզների և յերկաթուղային տրանսպորտի քաղբաժինների վորոշումներով՝ կուսակցության յերկու անդամի յերաշխափորությամբ:

17. Համկոմկուսի (ք) համակրողների խմբակներում կազմակերպվածները պարտավոր են հաճախել կուսակցության բոլոր դռնբաց ժողովները, վորտեղ նրանք ոգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով, ակտիվ կերպով պայքարել կուսակցության յեմ կառավարության վորոշումների կատարման համար, սխտեմատիկորեն աշխատել կուսակցական կազմակերպությունների դեկավարության մեջ՝ իրենց գաղափարական քաղաքական մակարդակը բարձրացնելու վրա:

IV. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

18. Կուսակցական կազմակերպչական կառուծվածքի ղեկավար սկզբունք ե հանգիստանում դեմոկրատական կենտրոնացումը, վորը նշանակում ե.

ա) կուսակցության բոլոր ղեկավար որդանների ընտրականություն վերեից մինչև ներքև.

բ) կուսակցական որդանների պարբերաբար հաշվետվություն իրենց կուսկազմակերպությունների առաջ.

գ) կուսակցական խիստ կարգապահություն և վորքումասնության յենթարկվելը մեծամասնությանը.

դ) վերադաս որդանների վորոշումների անպայման պարտադիր լինելը ստորին որդանների և կուսակցության բոլոր անդամների համար:

19. Կուսակցությունը կառուցվում ե դեմոկրատական կենտրոնացման հիմունքներով, տերիտորիալ — արտադրական հատկանիշով. վորեք շրջանն սպասարկող կազմակերպությունը՝ վերադաս ե համարվում տվյալ շրջանի մի մասն սպասարկող բոլոր կազմակերպությունների նկատմամբ, կամ վորեք արտադրության, կամ վարչության ամբողջ ճյուղն սպասարկող կազմակերպությունը՝ վերադաս ե համարվում տվյալ ճյուղի մի մասն ըս. սպասարկող բոլոր կազմակերպությունների նկատմամբ:

20. Բոլոր կուսկազմակերպություններն ինքնավար են տեղական հարցերը լուծելու գործում, վորչափով այդ վորոշումները չեն հակասում կուսակցության վորոշումներին:

21. Յուրաքանչյուր կազմակերպության բարձրագույն ղեկավար որդանն ե հանգիստանում ընդհանուր ժողովը, կոնֆերանսը կամ համագումարը:

22. Ընդհանուր ժողովը, կոնֆերանսը կամ համագումարն ընտրում են կոմիտե, վորը հանգիստանում ե նրանց գործադիր որդանը և ղեկավարում ե կազմակերպության ամբողջ ընթացիկ աշխատանքը:

23. Կուսակցության կազմակերպման սխեման հետևյալն ե.

ա) ԽՍՀՄ տերիտորիալ — Համամիութենական համագումարը — Համկոմկուսի (բ) Կենտկոմ:

բ) մարզեր, յերկրներ, հանրապետություններ — մարզային, յերկրային կոնֆերանսներ, ազգային կոմկուսների համագումարներ — մարզկոմներ, յերկրային կոմիտեներ, ազգային կոմկուսների կենտկոմներ:

գ) քաղաքներ, ռայոններ — քաղաքային, ռայոնական կոնֆերանսներ — քաղաքային, ռայոնական կոմիտեներ:

դ) ձևաթղթավորություններ, գյուղեր, կոլխոզներ, ՄՏԿ-ներ՝ կարմիր բանակային գործառններ, հիմնարկություններ — ընդհա.

նուր ժողովներ—սկզբնական կուսակցականերպով թյուճանների կոնֆերանսներ, սկզբնական կուսակցական կոմիտեներ (գործարանային կուսկոմներ, ֆաբկուսկոմներ, կարմիր քանակային զորամասի կուսբյուրո և այլն)։

24. Հաշվետվության, յենթարկման, կուսակցական վորոշումների անցման և բողոքարկման կարգը (վերադաս ինստանցիայացից դեպի ստորինը)։—Համամիութենական համագումար, Համկոմկուսի (բ) Կենտկոմ, մարզային—յերկրային կոնֆերանս, ազգային կոմկուսի կոնֆերանս կամ համագումար, մարզային յերկրային կոմիտե, ազգային կոմկուսների կենտկոմ, քաղաքային-ռայոնական կոնֆերանս, քաղաքային-ռայոնական կոմիտե և այլն։

25. Կուսակցական հրահանգների և վորոշումների իրականացման դործնական աշխատանքի համար (և խորհրդային-տնտեսական որգանների ու ստորին կուսակցականերպով թյուճանների կողմից դրանց կատարումն ստուգելու համար) մարզկոմներում, յերկրային կոմիտեներում, ազգային կուսկոմների կենտկոմում և Համկոմկուսի (բ) Կենտկոմում ամբողջական արտադրական-ճյուղային բաժիններ են ստեղծվում։

Համկոմկուսի (բ) Կենտկոմում.

ա) Գյուղատնտեսական, բ) Արդյունաբերական, գ) Տրանսպորտային, դ) Պլանային-ֆինանսական-առևտրական, յե) Քաղաքական-վարչական, զ) Հեկավար կուսորգանների, ե) Կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդի, ը) Մարքսի—Ենգելսի—Լենինի ինստիտուտ (նույնպես և յերկու սեկտոր՝ Գործերի կառավարման և Հատուկ սեկտոր)։

Մարզկոմներում, յերկրային կոմիտեներում և ազգային կոմկուսների կենտկոմներում։

ա) Գյուղատնտեսական, բ) Արդյունաբերական-տրանսպորտային, գ) Խորհրդային-առևտրական, դ) Կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդի, յե) Հեկավար կուսորգանների (քաղաքային ու ռայոնական) ու Հատուկ սեկտոր։

Յուրաքանչյուր արտադրական ճյուղային բաժնում կենտրոնանում են տվյալ ճյուղին վերաբերող ամբողջ աշխատանքը։—Կուսակցամաշխատանք, կադրերի բաշխումն ու պատրաստումը, ագիտման աշխատանք, արտադրական պրոպագանդ, համապատասխան խորհրդային-տնտեսական որգանների և կուսակցական կազմակերպությունների կողմից կուսակցական վորոշումների կատարման հսկողություն։

26. Կուսակցության յուրաքանչյուր կազմակերպություն, յերբ վերջնականապես հաստատվում է, իրավունք ունի իրա կնիքն ունենալու, բայց վոչ այլ կերպ, քան համապատասխան վերադաս կուսակցականերպով թյուճան սանկցիայով։

V. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

27. Կուսակցության գերագույն որդանը հանդիսանում է համագումարը: Հերթակիսն համագումարները հրավիրվում են վոչ պակաս յերեք տարին մի անգամ: Արտակարգ համագումարները հրավիրվում են Կենտրոնական Կոմիտեյի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, կամ վերջին կուսհամագումարին ներկայացված անդամների ընդհանուր թվի վոչ պակաս քան մեկ յերրորդական մասի պահանջով: Կուսհամագումարի հրավիրումը և որակարգը հայտարարվում է վոչ ուշ քան համագումարից մեկ ու կես ամիս առաջ: Արտակարգ համագումարները հրավիրվում են յերկու ամսվա ժամկետում:

Համագումարն վավերական է համարվում, յեթե նրան ներկայացված է վերջին հերթական համագումարին ներկայացված ընդ որ կուսանդամների վոչ պակաս քան կեսը:

Համագումարի ներկայացուցչության նորմաները սահմանվում են Կենտրոնական Կոմիտեյի կողմից:

28. Այն դեպքում, յերբ Կենտրոնական Կոմիտեն 27-րդ կետում մատնանշված ժամկետում չի հրավիրել արտակարգ համագումար, արտակարգ համագումարի հրավիրումը պահանջող կադմակերպություններն իրավունք ունեն ստեղծել կադմակերպչական կոմիտե, վոչն արտակարգ համագումարը հրավիրելու գործում ոգտվում է Կենտրոնական Կոմիտեյի իրավունքներով:

29. Համագումարը

ա) լսում և հաստատում է Կենտրոնական Կոմիտեյի, կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի, Կենտրոնական Վերաստուգիչ Հանձնաժողովի և այլ կենտրոնական կադմակերպությունների հաշվետվությունները:

բ) վերանայում և փոփոխում է կուսակցության ծրագրին ու կանոնադրությունը:

գ) վորոշում է կուսակցության տակտիկական գիծն ընթացիկ քաղաքականության հիմնական հարցերի նկատմամբ:

դ) ընտրում է Կենտրոնական Կոմիտե, Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողով, Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողով և նշում է Խորհրդային Վերահսկողության Հանձնաժողովի կազմը, ԽՍՀՄ Կենտգործկոմին և Ժոխկոմխորհին ի հաստատության ներկայացնելու համար:

30. Կենտրոնական Կոմիտեն և մյուս կենտրոնական կադմակերպություններն ընտրում են համագումարի կողմից սահմանված կազմով: Կենտրոնական Կոմիտեյի անդամների հեռանալու դեպքում, նրա կազմը լրացվում է համագումարի կողմից ընտրված թեկնածուների թվից՝ համագումարի սահմանված կարգով:

31. Կենտրոնական Կոմիտեն պլենար նիստ է ունենում վոչ

պակաս, քան չորս ամիսը մի անգամ: Կենտկոմի անդամության թեկնածուները ներկա չեն գտնվում Կենտկոմի պլենումի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

32. Կենտրոնական Կոմիտեն կազմակերպում է՝ քաղաքական աշխատանքի համար Քաղաքական բյուրո, կազմագերպչական աշխատանքի ընդհանուր ղեկավարության համար—Կազմակերպչական բյուրո և կազմակերպչական, ու գործադիր բնույթ կրող ընթացիկ աշխատանքի համար—Քարտուղարություն:

33. Կենտրոնական Կոմիտեն համագումարների ժամանակամիջոցում ղեկավարում է կուսակցության ամբողջ աշխատանքը, ներկայացնում է կուսակցությանը մյուս կուսակցությունների կազմակերպությունների և հիմնարկների հետ հարաբերությունների ժամանակ, կազմակերպում է կուսակցության զանազան հիմնարկները և ղեկավարում է նրանց գործունեությունը, նշանակում է կենտրոնական որգանների խմբագրություններ, վորն աշխատում են նրա հսկողությամբ, նշանակում է տեղական խոշոր կազմակերպությունների կուսակցական որգանների խմբագիրներին, կազմակերպում և ղեկավարում է հասարակական նշանակություն ունեցող ձեռնարկությունները, բաշխում է կուսակցության ուժերն ու միջոցները և վարում է կենտրոնական դրամարկը:

Կենտրոնական Կոմիտեն ուղղություն է տալիս խորհրդային և հասարակական կենտրոնական կազմակերպությունների աշխատանքին՝ նրանց կուսակցական խմբակների միջոցով:

34. Բոլշևիկյան ղեկավարությունն ու քաղաքական աշխատանքն ուժեղացնելու նպատակով՝ Կենտրոնական Կոմիտեն իրավունք ունի քաղաքական բաժիններ ստեղծել և Կենտկոմի կուսակցական կազմակերպիչներ առաջադրել սոցիալիստական շինարարության հետ մնացող տեղամասերում, վորոնք առանձնապես կարևոր նշանակություն են ստանում ժողովրդական տնտեսություն և ամբողջ յերկրի համար, նույնպես և քաղբաժինների կողմից իրենց հարվածային խնդիրների ըստ չափու կատարման, վերածել այդպիսի սովորական կուսակցական որգանների՝ արտադրական—տեքստիլայի հատկանիշով:

Քաղբաժիններն աշխատում են համապատասխան արտադրության կուսակցական կոմիտեների իրավունքներով և ղեկավարվում են անմիջապես Համկոմկուսի (բ) Կենտկոմի կողմից՝ Կենտկոմի արտադրական ճյուղային բաժինների կամ հատուկ կազմակերպվող քաղվարչությունների ու քաղսեկտորների միջոցով:

35. Կենտկոմն իր աշխատանքի մասին պարբերաբար ինֆորմացիա չի տալիս կուսակցական կազմակերպություններին:

36. Կուսակցության Վերահսկողության Հանձնաժողովը՝
ա) վերահսկում է կուսակցության և Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշումների կատարումը:

բ) պատասխանատվության ե յենթարկում կուսակցական կար-
հապահությունը խանգարող հանցավորներին:

գ) պատասխանատվության ե յենթարկում կուսակցական ե-
տիկան խախտող հանցավորներին:

37. Կենտրոնական Վերստուգիչ Հանձնաժողովը վերստու-
գում ե. ա) գործերի արագությունն ու ընթացքի ճշտություն-
նը կուսակցության կենտրոնական որդաներում և Համկոմկուսի
(ք) ենտկոմի քարտուղարության ասլարատի կարգավորությունը
բ) Համկոմկուսի (ք) Կենտկոմի դրամարկդն ու ձեռնարկություն-
ները:

VI. ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ-ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

38. Մարզային-յերկրային, հանրապետական կուսակցական
կազմակերպության զերագույն որդան ե հանդիսանում մարզա-
յին-յերկրային կուսկոնֆերանսը, կամ աղգային կոմկուսակցու-
թյունների համագումարը, իսկ նրանց միջև ժամանակամիջոցում
մարզային-յերկրային կոմիտեն, աղգային կոմկուսի կենտկոմը:
Իրենց գործունեության ընթացքում նրանք ղեկավարվում են Հա-
մաժիութենական Կոմունիստական Կուսակցության և նրա ղե-
կավար որդանների ընդհանուր վորդուհներով:

39. Յերկրային-մարզային հերթական կոնֆերանսը, կամ աղ-
գային կոմկուսակցությունների համագումարը հրավիրվում և
յերկրային մարզային կոմիտեյի-աղգային կոմկուսակցություննե-
րի կենտկոմների կողմից տարի ու կես մի անգամ, իսկ արտա-
կարգը՝ յերկրային-մարզային կոմիտեների-աղգային կոմկու-
սակցությունների կենտկոմների կողմից, կամ յերկրի-մարզի-
հանրապետության կազմակերպության մեջ մանող անդամների
ընդհանուր թվի մեկ յերրորդական մասի պահանջով:

Յերկրային-մարզային՝ կոնֆերանսների, աղգային կոմկուսակ-
ցությունների համագումարի ներկայացուցողության նորմաները
սահմանվում են յերկրային-մարզային կոմիտեի-աղգային կոմ
կուսակցությունների կենտկոմի կողմից.

Յերկրային-մարզային կոնֆերանսների, աղգային կոմկուսակ-
ցության համագումարը լսում և հաստատում և յերկրային-մար-
զային կոմիտեյի, աղգային կոմկուսակցությունների կենտկոմնե-
րի, վերստուգիչ հանձնաժողովի և յերկրային մարզային ալլ-
հիմնարկությունների հաշվետու ղեկուցումները, քննարկում և
կուսակցական, խորհրդային, տնտեսական և պրոեկտնալ աշխա-
տանքի հարցերն-յերկրում, մարզում կամ հանրապետությունում
և ընտրում և յերկրային, մարզային կոմիտե (հանրապետություն-
ներում—աղգային կոմկուսակցությունների կենտկոմներ) վերս-

առաջին հանձնաժողովը և կուսակցութեան համաժողովարի պատգամավորները:

40. Յերկբային-մարդային կոմիտեն, իսկ հանրապետութիւններում ազգային կոմկուսակցութիւնները կենսակոմիտեներն ընթացիկ աշխատանքի համար ընտրում են 11 անդամից ժողովի: համապատասխան գործադիր որոշումներ, վորոնք հաստատվում են Համկոմկուսի (Բ) Կենտկոմի կողմից և յերկու քարտուղար—առաջին և յերկրորդ: Քարտուղարների համար պարտադիր և առնվազն 12 տարվա կուսատաժ:

41. Յերկբային—մարդային կոմիտեները և ազգային կոմկուսի կենտկոմը կազմակերպում են կուսակցութեան զանազան հիմնարկները, յերկրի, մարդի հանրապետութեան սահմաններում, ղեկավարում և նրանց գործունեութիւնը, նշանակում են յերկնային, մարդային կուսակցական որդանի խմբադրութիւնը, վորն աշխատում և նրանց հակադրութեան ներքո, ղեկավարում են անկուսակցական կազմակերպութիւններում գտնվող կուսակցան խմբակները, կազմակերպում և և վարում մարդի, յերկրի հանրապետութեան համար ընդհանուր նշանակութիւն ունեցող ձեռնարկութիւնները, իր կազմակերպութեան սահմաններում բաշխում և կուսակցութեան ուժերն ու միջոցները, վարում և յերկրային-մարդային-հանրապետական կուսակցական դրամարկը:

42. Յերկբային-մարդային կոմիտեյի-ազգային կոմկուսակցութեան կենտկոմի պլենումը հրավիրվում և առնվազն յերեք ամիսը մի անգամ:

43. Ազգային և աշխատային ու ինքնավար հանրապետութիւնների կուսակցական կազմակերպութիւնները, վորոնք մշտնում են յերկրների և հանրապետութիւնների կուսակցական կազմի մեջ, աշխատում են յերկրային կոմիտեների-ազգային կոմկուսակցութիւնների Կենտկոմի ղեկավարութեան տակ և իրենց ներքին կյանքում ղեկավարում են կուսակցութեան կանոնադրութեան վեցերորդ գլխում յերկնային, մարդային և հանրապետական կազմակերպութիւնների մասին տրված դրույթներով:

VII. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԵՎ ՌԵՅՈՆԱԿԱՆ (գյուղական յեվ քաղաքային) ԿԱԶՄՍԿԵՐՊՈՒԹԵՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

44. Քաղաքային-աշխատական կուսակցական կոմիտեները հրավիրվում և քաղաքային-աշխատական կոմիտեյի կողմից առնվազն տարին մեկ անգամ, արտակարգը՝ քաղաքային-աշխատական կոմիտեյի վորոշմամբ կամ քաղաքային-աշխատական կազմակերպութեան մեջ մտնող կազմակերպութիւնների անդամների ընդհանուր թվի մեկ յերրորդական մասի պահանջով:

Քաղաքային - ռայոնական կոնֆերանսը լսում և հաստատում է քաղաքային - ռայոնական կոմիտեյի, վերստուգիչ հանձնաժողովի և այլ քաղաքային - ռայոնական հիմնարկությունների հաշվետվությունները. ընտրում է քաղաքային-ռայոնական կոմիտե, վերստուգիչ հանձնաժողով և պատգամավորներ յերկրային-մարզային կոնֆերանսի կամ ազգային կոմկուսակցությունների համագումարի համար:

45. Քաղաքային կոմիտեյի քարտուղարի համար պարտադիր է տաս տարվա կուսակցական ստաժը, իսկ ռայոնական կոմիտեյի քարտուղարի համար—յոթ տարվա ստաժը: Քաղաքային և ռայոնական կոմիտեների քարտուղարները հաստատվում են մարզկոմի, յերկրային կոմիտեյի, կամ ազգային կոմկուսակցության կենտկոմի կողմից:

46. Քաղաքային - ռայոնական կոմիտեն ընտրում է 5-7 հոգուց բաղկացած բյուրո, կազմակերպում և հաստատում է կուսակցական սկզբնական կազմակերպությունները ձեռնարկություններում, սովխոզներում, ՄՏԿ-ներում, կոլխոզներում և հիմնարկություններում, գրանցում է բոլոր կոմունիստներին, կազմակերպում է կուսակցության զանազան հիմնարկություններ քաղաքի ռայոնի սահմաններում և ղեկավարում նրանց գործունեությունը, նշանակում է քաղաքային-ռայոնական կուսակցական որդանի խմբագրին, վերն աշխատում է նրա ղեկավարությունում ու հսկողությունում, ղեկավարում է արտակուսակցական կազմակերպություններում յեղած կուսխմբակները, կազմակերպում է համաքաղաքային, ռայոնական նշանակություն ունեցող իր ձեռնարկությունները, քաղաքի և ռայոնի սահմաններում բաշխում է կուսակցության ուժերն ու միջոցները և վարում է քաղաքային-ռայոնական դրամարկը: Քաղաքային - ռայոնական կոմիտեն հաշվետվություն է ներկայացնում յերկրային-մարզային կոմիտեյին—ազգային կոմկուսակցության կենտկոմին իր գործունեության մասին այն ժամկետներում և այն ձևով, վեր սահմանված է Համկոմկուսի (բ) կենտկոմի կողմից:

47. Խորը քաղաքներում Համկոմկուսի (բ) կենտկոմի թույլտվությամբ ռայոնական կազմակերպություններ են ստեղծվում, յորոնք լենթարկվում են քաղաքային կոմիտեյին:

VIII. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶՐՆՍԿԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

48. Կուսակցության հիմքն են հանդիսանում սկզբնական կուսակցական կազմակերպությունները: Սկզբնական կուսակազմակերպություններ ստեղծվում են ֆաբրիկներում, գործարաններում, սովխոզներում և այլ առտեսական ձեռնարկություններում, կոլխոզներում, ՄՏԿ-ում, Կարմիր բանակային գորամասերում, գյու-

դերուամ, հիմնարկներուամ և այլն, վոչ պակաս յերեք կուսանդամի առկայութեան դեպքուամ: Այն ձեռնարկութեաններուամ, կոլխոգներուամ, հիմնարկութեաններուամ և այլն, վորտեղ կան յերեքից պակաս կուսանդամ, ստեղծվում են թեկնածուական կամ կուսկոմյերիտ խմբակներ՝ ռայկոմների, քաղկոմների կամ քաղբաժինների կողմից առաջադրվող կուսակազմակերպչի զխաւորութեամբ:

Սկզբնական կուսակցական կազմակերպութեանները հաստատվում են ռայոնական կամ քաղաքային կոմիտեների, կամ համապատասխան քաղբաժինների կողմից:

49. Մեծ թվով կոմունիստներ ունեցող (հարյուրից մինչև յերեք հազար յեւ ալելը) խոշոր ձեռնարկութեաններուամ, հիմնարկութեաններուամ, կոլխոգներուամ յեւ այլն—բոլոր ձեռնարկութեանները, հիմնարկութեանները և այլն ընդգրկող սկզբնական կուսակցական կազմակերպութեան ներսում, յուրաքանչյուր առանձին դեպքում ռայկոմի, քաղկոմի կամ համապատասխան քաղբաժնի հաստատմամբ, կարող են կազմակերպվել կուսակցական կազմակերպութեաններ ըստ ցեխերի, տեղամասերի, քաղբաժինների և այլն: Իր հերթին ներքեխային, տեղամասային և այլն կազմակերպութեաններում կարող են ստեղծվել կուսակցական խմբակներ ըստ բրիգադների, ագրեգատների, ձեռնարկութեանների և այլն:

50. Կուսակցական սկզբնական կազմակերպութեանը բանվորական և գյուղացիական մասսաներն կապում ե կուսակցութեան զեկաւար որդանների հետ: Նրա խնդիրն ե հանդիսանում.

1) ագիտացիոն և կազմակերպչական աշխատանք տոնել մասսաների մեջ կուսակցական լողունքների և վորոշումների համար.

2) ներգրավել համակրողներ և նոր. անդամներ ու դաստիարակել նրանց քաղաքականապես.

3) աջակցել ռայկոմին, քաղկոմին կամ քաղբաժնին, նրա ամենաբայա կազմակերպչական և ագիտացիոն աշխատանքում:

4) մոբիլիզացիայի յենթարկել մասսաներին ձեռնարկութեաններում, կոլխոգներում և այլն արտադրական պլանի կատարման, աշխատանքային կարգապահութեան ամրապնդման յեւ հարվածայնութեան զարգացման համար.

5) պայքարել թափթփվածութեան և գործերի անտնտեսավարութեան դեմ ձեռնարկութեաններում, սովխոգներում, կոլխոգներում և ամենաբայա հոգատարութեան ցուցաբերել բանվորների ու կոլխոգնիկների կենցաղային պայմանների բարելաւման գործում.

6) ակտիւ մասնակցել, վորպես կուսակցական որդան, յերկրի տնտեսական և քաղաքական կյանքին:

51. Ընթացիկ աշխատանքը վարելու համար սկզբնական կուսակցական կազմակերպութեանն ընտրում ե 11 հոգուց վոչ ալելի

կազմով կուսակցական կոմիտե (Ֆարկուսկոմ, զործարանային կուսկոմ և այլն) մի տարով, իսկ ցեխային կազմակերպությունը — կուսկազմակերպիչ և ընտրում, վորը հաստատվում և սկզբնական կուսկոմիտեյի կողմից:

15 անդամից և թեկնածուից պակաս ունեցող կուսկազմակերպություններում կուսակցական կոմիտեներ չեն ստեղծվում, այլ առաջադրվում են կուսակցական կազմակերպիչներ:

Կուսակցական սկզբնական կոմիտեներում, վորոնք ընդգրկում են կուսակցության 100 անդամից վոչ ավելի, կուսաշխատանքը տարվում է, վորպես կանոն, արտադրության մեջ աշխատանքից չազատված աշխատողներով: Մինչև 1000 անդամ ունեցող կուսկոմիտեներում պիտի աշխատեն 2-3 վճարովի աշխատողներ, վորոնք ազատված են արտադրության աշխատանքից: հազար և ավելի անդամ ունեցող կուսկոմիտեներում կարող են աշխատել 4-5 ընկերներ, վորոնք ազատված են արտադրության աշխատանքից:

Սկզբնական կուսակցական կոմիտեներին քարտուղարներին համար պարտադիր է վոչ պակաս քան յերեք տարվա կուսաստաժը, իսկ կուսկազմակերպիչների համար — յեկու տարվա կուսակցական ստաժ:

IX. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

52. Կուսակցական աշխատանքի ընդհանուր ղեկավարությունը Կարմիր բանակում, Կարմիր նավատորմում և ավիացիայում կենսագործվում է ԲԳԿԲ Քաղվարչության կողմից, վորն աշխատում է Համկոմկուսի (ք) Կենտկոմի զինվորական բաժնի իրավունքներով: Քաղվարչությունն իր ղեկավարությունն իրադրծում է իր կողմից նշանակվող քաղբաժինների, զինկոմիտեների և կուսակցական հանձնաժողովների միջոցով, վորոնք ընտրվում են համապատասխան բանակային կոնֆերանսներում:

Կարմիր բանակի, Կարմիր նավատորմի և ավիացիայի կուսկազմակերպություններն աշխատում են Համկոմկուսի (ք) Կենտկոմի հաստատած հատուկ հրահանգի հիման վրա:

53. Ոկրուգների, նավատորմների և բանակների քաղբաժինների պետերի համար պարտադիր է առա տարվա կուսաստաժը, դիվիզիաների և բրիգադի քաղբաժինների պետերի համար պարտադիր է վեց տարվա կուսաստաժը:

54. Քաղորդանքները պարտավոր են սերտ կապ պաշտպանել տեղական կուսկոմիտեների հետ՝ քաղորդանքների ղեկավարների (քաղմասի գծով ոգնականների) և զինկոմիտեների մշտական մասնակցության տեղական կուսկոմիտեների աշխատանքին՝ այլ և սիստեմատիկորեն լսելով կուսկոմիտեներում քաղորդանքների պետերի և զինկոմիտեների (քաղբաժնի գծով ոգնականի) ղեկուցումները զորամասներում տարվող քաղաշխատանքի մասին:

**X. ԱՐՏԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՍԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՅԵՂԱՄԵ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

55. Արտակուսակցական խորհրդային, պրոֆմիուլթենական, կոոպերատիվային և այլ մասսայական կազմակերպությունների համագումարներում, խորհրդակցություններում և ընտրովի որդաններում, վորտեղ կան վոչ պակաս քան 3 կուսանդամ, կազմակերպվում են կուսակցական խմբակներ, վորոնց խնդիրն է հանդիսանում բազմակողմանիորեն ուժեղացնել կուսակցության ազդեցությունը և անց կացնել նրա քաղաքականությունն արտակուսակցական միջավայրում, ամրապնդել կուսակցական և խորհրդային յերկաթե կարգապահությունը, պայքարել բյուրոկրատիզմի դեմ, սառուզել կուսակցական և խորհրդային դիրեկտիվների կատարումը:

Ընթացիկ աշխատանքների համար խմբակը քարտուղար է ընտրում:

56. Խմբակներն անկախ իրենց նշանակությունից ամբողջապես յենթարկվում են համապատասխան կուսկազմակերպություններին (Համկոմկուսի (ը) Կենտկոմ, յերկրային կոմիտե, մարզկոմ, ազգային կոմկուսի կենտկոմ, քաղկոմ, ռայկոմ): Բոլոր հարցերում խմբակները պարտավոր են խստիվ և անշեղորեն հետևել ղեկավար կուսկազմակերպությունների վորոշումներին:

**XI. ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՅԵՎ ԿԴՍԱԿՑԱԿԱՆ
ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

57. Կուսակցական քաղաքականության հարցերի ազատ յեմ դործարար քննարկումն առանձին կազմակերպություններում կամ ամբողջ կուսակցության մեջ հանդիսանում է կուսակցության յուրաքանչյուր անդամի անքակտելի իրավունքը, վոր բղխում է ներկուսակցական դեմոկրատիայից: Միայն ներկուսակցական դեմոկրատիայի հիման վրա կարելի յե ծավալել բոլշևիկյան ինքնաքննադատությունը և ամրապնդել կուսակցական կարգապահությունը, վորը պետք է լինի գիտակից և վոչ մեխանիկորեն: Բայց լայն դիսկուսիան, մանավանդ համամիութենական մասշտաբ ունեցող դիսկուսիան, կուսակցական քաղաքականության հարցերի շուրջը պետք է կազմակերպված լինի այնպես, վոր նա չհանգի աննշան փոքրամասնության փորձերին՝ փաթաթելու իր կամքը կուսակցության հսկայական մեծամասնության վզին, կամ ֆրակցիոն խմբավորումներ կազմակերպելու փորձերին, վորոնք ջլատում են կուսակցություն միասնությունը, կուսակցության մեջ պառակտում մտցնելու փորձերին, վորոնք կարող են թուլացնել պրոլետարիատի դիկտատուրայի ուժն ու կայունությունը, ի հրճվանք բանվոր դասակարգի թշնամիներին: Դրա համար համամիութենական մասշտաբով լայն դիսկուսիան կարող է ան-

հրաժեշտ ճանաչվել միայն այն դեպքում, յեթե ա) այդ անհրա-
ժեշտությունն ընդունվում է առնվազն մի քանի մարդային կամ
հանրապետական մասշտաբի տեղական կուսակազմակերպություն-
ների կողմից. բ) յեթե Կենտկոմի ներսում բացակայում է կու-
սակցական քաղաքականության զարևոր հարցերի նկատմամբ բա-
վականին հաստատուն մեծամասնություն. գ) յեթե, չնայած Կենտ-
կոմում յիդած հաստատուն մեծամասնության, վորը վորոշակի
տեսակետի վրա յե կանգնած, բայց այնուամենայնիվ Կենտկոմն
անհրաժեշտ է համարում իր քաղաքականության ճիշտ լինելն
ստուգել՝ կուսակցության մեջ դիսկուսիոն քննարկում միջոցով
Միայն այդ պայմանների կատարմամբ կարելի յե կուսակցու-
թյունն ապահովել հակակուսակցական տարրերի կողմից ներկու-
սակցական դեմոկրատիան չարաշահելուց, միայն այդ պայման-
ներում կարելի յե հույս ունենալ, վոր ներկուսակցական դեմոկ-
րատիան ոգուտ կբերի գործին և չի ոգտագործվի ի միաս կու-
սակցության ու բանվոր դասակարգին:

58. Կուսակցության միասնականության պահպանումը, անո-
ղոք պայքարը ֆրակցիոն պայքարի ամենաանշան փորձերի յեվ
պառակտման դեմ, խստագույն կուսակցական և խորհրդային
կարգապահությունը հանդիսանում են կուսակցության բոլոր
անդամների և կուսակցական կազմակերպությունների առաջնա-
կարգ պարտականությունը: Վորպեսզի կուսակցության ներսում
և խորհրդային ամբողջ աշխատանքում խիստ կարգապահությունն
իրագործվի և ամենամեծ միասնականություն ձեռք բերվի, բոլոր
տեսակի ֆրակցիոնականությունը վերացնելու հետ միասին, Համ-
կոմկուսի (բ) Կենտկոմը կարգապահության խախտման կամ ֆրա-
կցիոնականության վերսկսման կամ թո՛ւյլ տալու դեպքում՝ իրա-
վունք ունի կուսակցական տուժի բոլոր միջոցներ գործառնելու,
մինչև իսկ կուսակցությունից հեռացնելու, իսկ Կենտկոմի ան-
դամների նկատմամբ— թեկնածու փոխադրելու և վորպես ծայրահեղ
միջոց կուսակցությունից հեռացնելու Կենտկոմի անդամների, Կենտ-
կոմի անդամության թեկնածուների և Կուս. Վերահսկողության
Հանձնաժողովի անդամների նկատմամբ այդպիսի ծայրահեղ
կիրառման պայմանը պետք է լինի Կենտկոմի պլենումի գումա-
բելը՝ հրավիրելով Կենտկոմի անդամության բոլոր թեկնածուներ-
ին և Կուս. Վերահսկողության Հանձնաժողովի բոլոր անդամ-
ներին: Յեթե կուսակցության ամենապատասխանատու դեկավար-
ների այդպիսի ժողովը ձայների յերկու յերրորդով անհրաժեշտ
կդառնի Կենտկոմի կամ Կուսակցական Վերահսկողության Հանձնա-
ժողովի անդամի փոխադրելը թեկնածու կամ կուսակցութեմունից
հեռացնելու, ապա այդպիսի միջոցը պետք է իրագործվի անմի-
ջապես:

59. Կուսակցական և խորհրդային կենտրոնների վորոշումները
պնտք է կատարվեն արագ և ճշգրիտ: Բարձրագույն կազմակերպու-

թյան վորոշումը չկատարելու և կուսակցական հաստատված կարծիքով հանցագործ ճանաչված և այլ արարքների հետեւանքն էլ լինի՝ կազմակերպության համար՝ պարսավանք յեւ ընդհանուր վերահաշվառում (կազմակերպության ցրումը), կուսակցութեան անդամներն անդամների համար՝ պարսավանքի այս կամ այն ձեւը (նկատողութեան, հանդիմանութեան և այլն), հրապարակային պարսավանք, ժամանակավոր հեռացում պատասխանատու կուսակցական — խորհրդային աշխատանքից, վտարումը կուսակցութեանից, հալորդելով հանցանքի մասին վարչական գատակոն իշխանութեաններին:

60. կուսակցութեան Վերահսկիչ Հանձնաժողովի հարցերին ճշգրիտ պատասխան տալուց հրաժարվող կուսակցական անդամները յենթակա յեն կուսակցութեանից անմիջապէս հեռացման:

XXII. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

61. կուսակցութեան և նրա կ'զմակերպութեանների դրամական միջոցները կազմվում են անդամավճարներից, կուսակցութեան ձեռնարկութեանների յեկամուտներից և ուրիշ մուտքներից:

62. կուսակցութեան անդամների և թեկնածուների համար յուրաքանչյուր ամիս անդամավճարների հետեւյալ չափն և սահմանվում՝

Մինչև 100 ռուբլի աշխատավարձ ստացողները վճարում են 20 կոպեկ:

101-ից մինչև 150 ռուբլի աշխատավարձ ստացողները վճարում են 60 կոպեկ:

151 ռուբլուց մինչև 200 ռուբլի ստացողները վճարում են 1 ռուբլի:

201 ռուբլուց մինչև 250 ռուբլի ստացողները վճարում են 1 ռ. 50 կոպեկ:

251 ռուբլուց մինչև 300 ռուբլի ստացողները վճարում են 2 ռուբլի:

300 ռուբլուց եւ վերի մինչև 500 ռուբլի աշխատավարձ ստացողները վճարում են աշխատավարձի յերկու տոկոսը:

500 ռուբլուց եւ վեր ստացողները վճարում են աշխատավարձի յերեք տոկոսը:

63. Թեկնածու ընդունվելիս մուտքի վճար քանձվում և ստացած աշխատավարձի յերկու տոկոսի չափով:



գալ Հիմնարար գիտ. գրադ.



220040248

А $\frac{\text{II}}{40248}$

У С Т А В

Всесоюзной Коммунистической Партии
(больш. виков)

ПАРТИЗДАТ * Баку * 1934